ԱՎԵՏԻՔ ԳՐԻԳՈՐԻԻ ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

----- 2021 թվականի N –Ա

ԱՎԵՏԻՔ ԳՐԻԳՈՐԻԻ ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատել Ավետիք Գրիգորիի Կարագուլյանին (ծնվ.՝ 1996 թվականի հուլիսի 12-ին, հաշվառման հասցեն՝ ք. Երևան, Գյուլիքեխվյան 7 շ., բն. 8):

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԱՎԵՏԻՔ ԳՐԻԳՈՐԻԻ ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. **Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

«Ավետիք Գրիգորիի Կարագուլյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրա գիտական գործունեության ընթացքում ձեռք բերված գիտելիքների ընդլայնմանը, և նոր գիտելիքների ստացմանն ու կիրառմանն ուղղված մտավոր ստեղծագործական գործունեությունը շարունակելու հնարավորության ընձեռնմամբ:

2. **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

ՀՀ քաղաքացի Ավետիք Գրիգորիի Կարագուլյանը (ծնվ.՝ 1996 թվականի հուլիսի 12-ին, հաշվառման հասցեն՝ ք. Երևան, Գյուլիքեխվյան 7 շ., բն. 8), ՀՀ կառավարության 2019 թվականի հուլիսի 18-ի N 912-Ա որոշմամբ ստանալով տարկետում՝ սովորել է Փարիզի պոլիտեխնիկական ինստիտուտի Փարիզի վիճակագրության և տնտեսագիտական կառավարման ազգային դպրոցում:

2021 թվականի հուլիսի 1-ին «Լանժևեն Մոնտե Կարլոյի հետ դիսկրետ տվյալների ընտրություն» թեմայով պաշտպանել է ատենախոսությունը և Փարիզի պոլիտեխնիկական ինստիտուտի կողմից նրան տրվել է դոկտորի գիտական աստճանի դիպլոմ, որն էլ ՀՀ ԲՈԿ-ի 0472 հավաստագրով հավաստվել է վերջինիս ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճանը:

Աշխատելով «Երևանէն գիտակրթական» հիմնադրամում որպես հետազոտող՝ զբաղվել է հետազոտական աշխատանքով՝ կիրառական մաթեմատիկայի և մեքենայական ուսուցման ոլորտում:

Նրա գիտական հրապարակումները տպագրվել են հայկական, արտասահմանյան ամսագրերում:

3. **կնկալվող արդյունքը.**

«Ավետիք Գրիգորիի Կարագուլյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը, Ա. Կարագուլյանին՝ որպես լավագույն մասնագետի, հնարավորություն կընձեռի գիտական, գիտատեխնիկական և գիտահետազոտական գործունեությունը ծավալելու նպատակով՝ շարունակել աշխատելու «Երևանէն գիտակրթական» հիմնադրամում:

«Ավետիք Գրիգորիի Կարագուլյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ու եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

4. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

5. **Նախագիծը չի բխում ռազմավարական փաստաթղթերից:**